

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԽԲ

(Յակոբ Դ. կաթողիկոս Զուղայեցի Կ. Պոլսէն առ եղիազար կաթողիկոս ի Հալէպ) (*)

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն հայոց, եւ պատրիարք Վաղարշապատու լուսակառ եւ քրիստոսանկար, երկնահանգէտ եւ աշխնասարատ, սրովբէնպատ եւ քրովբէնամ սրբոյ աթոռոյ էջմիածնիւ Յորմէ ժամանակոյ հասցէ աւանդն տէրունի, նշանն պսնծալի տեսուն Յիսուսի՝ միարար եւ չաղկապողական ի տարուստ եւ ի բացատ միջոցէ. հանդերձ աստուածային լրութեամբն՝ առ իսկապէս սիրեցեալ եւ հոգեւոր եղբայրս իմ եղիազար կաթողիկոսդ, ցնծալ քեզ յարաժամ օրիորդացեալ մանկամբք Սրնի ի խնամս Տեառն Յիսուսի յաւէտապատուութեան քեզ ի ցնծութիւն մեզ եւ ի պարծանս համայնից ի Քրիստոս հաւատացելոց: Շնորհք սկզբնաւոյս պատճառին Հօր, եւ սէր համատիպ պատկերի Որդւոյն, եւ գթութիւն գոյակցի ամենասուրբ Հոգւոյն անսպառախաղաց մշտնոս ծառայեսցի ի վերայ քո եւ ըստ արեգականային բազմանշոյլ առ քեզ բազմասցի, եւ ընդ քեզ կայացեալ ունակասցի յարածգական յաւիտենիւ եւ յարագոյ ժամանակաւ ամէն:

Եւ ընդ սիրալորական եւ ողջունական

(*) Ընդօրինակութեան միջ նամակիս վերնագիրն է. «Յակոբ կաթողիկոսի սիրոյ զիր առ եղիազար կաթողիկոս»:

Վերջին ժամանակներս Ունտալճեան հրապարակ հանեց իր մի նոր տեսութիւնը, որով խաղաղեղնը դառնում է հայերէն լեզուի մի նախաւոր ձեւը եւ խաղիկներն ու հայերը իբրեւ ազգ էլ նշանանում են:

Այս փորձն էլ սակայն անյաջող անցաւ:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շաբաթակէտ)

Նամակիս՝ գիտութիւն լիցի խոհեմութեանդ, զի ըստ ընտրութեան գրոց որոց եւ ըստ մարդկութեան յառաջարկութեանց մտաց իմաստնոցն՝ զովելի է ներ նկատումն իրի վախճանականի, յորոց մանաւանդ Սողոմոն նին է մեզ յատկապէս առնլի՝ թէ Իմաստութիւն յիւս ճանապարհաց գովի՝ զնոյն առեալ մեր մտածութեամբ յողագոս կառարօծնակոյն պատճառին այնորիկ, ի տեղի իջման Միածնի Որդւոյն Աստուծոյ. կարեալ՝ զձեռնանէ միմիանց՝ եղաք ուխտս եւ կռեցաք դաշինս որպէս զի եղիցի այս օգուտ մերայնոցս աւանանի, ներկայիցս եւ ապագայիցս եկեղոց նպատակ. եւ զայսուսիկ պարտ էր մեզ անջրելի պահել հաստատութեամբ, ըստ Դաւթի վկայութեան. Ուխտս զիք եւ կատարեցէք, եւ դարձեալ ըստ Սողոմոնի, Զինչ եւ ուխտեցես դու Աստուծոյ, մի՛ յամիցես հատուցանել զնա, որչափ եւ ուխտեցես հատո՛, զի լաւ է քեզ չուստել քան ուխտել եւ ոչ հատուցանել. եւ զի հարկ էր քեզ սիրելւոյ զնոյն ուխտ եւ դաշինք ըզմտաւ ածել միշտ եւ պահել ի նշնութեան, որպէս եւ եսն ունէի ծրարեալ պահատի ի մերում մարմնեղէն սեռելիւ Քանդի յայնմ օրէ մինչ չեւ ձեռնամուռս լինելն քո յայդմ գործս՝ անարատ ունէի զսէր ուխտադրուութեանն, զի վկայն իմ յերկինս է եւ իրաւաւ դէտն ի բարձրունս, ըստ Յորայ: Իսկ յայտ երիս ամս զինչ անցք անցին, այն ամենայն ոչ ըստ կանոնաց էր, եւ ոչ կենարարին պատուիրան, այլ ստգտանաց էր գործ: Զի գտակ կորստեան եւ առիթն ամենայն չար եաց բազմանար մեքենայիւ ք մարտ եղեալ ոգորէր առ սուրբ տեղիսն եւ առ յանդամս Քրիստոսի, զի ըստ իւրոյ բազմանացն յանկ հանցէ որպէս եւ է լւերն գործ սովորական: Բայց գոհութիւն եւ փառք Քրիստոսի Փրկչին մերոյ, զի լուաւ պաղատանաց ծառայից իւրոց, եւ յամօթ արար զբանսարկու պիղծն, եւ զիւր վաղալար յորոգայթն մանրեալ փշրեաց, եւ ըստ կամաց իւրոց զիւրն խաղաղութիւն անօրինեալ հաստատեաց, թէ՛ այսր եւ թէ՛ այգր. այսուհետեւ մի՛ հես աշխատ արասցես զիմ ծերութիւն: Դարձեալ ծանիր, սիրելի՛, զի մեք յաւուր երկուշաբթին օր զկնի Պաշտօնակերպութեանն՝ միջնորդութեամբ Սարգիս վարդապետին պատրիարքի եւ հայցուածք քանանայից եւ ժողովրդոց՝ արարաք խաւ

զաղուծիւն եւ հաշտութիւն. ապա եւ գինի քանի աւուրց անցելոյ, ի յաւարս փոխման տօնի բարեկենդանի Սուրբ Աստուածածնին, եկն ուրախարար թուղթ մտրտիրոս վարդապետին, յորում գրեալ էր զխաղաղութենէ ձերմէ, եւ եղեւ կրկին ուրախութիւն եւ ցնծութիւն բոլոր ժողովրդեան, որով ամենեքեան հանդիսացեալք Աստուծով զփառատրական երգէին նըւագ, որ եբարձ գիտովութիւն եւ հաստատեաց զխաղաղութիւն, եւ եւս իմա՛, սիրելի, սիրելւոյն Տեսնո՞յ զխօսս. եթէ սիրտք մեր գմեղ ոչ սոգտանիցեն՝ համարձակութիւն ունիմք եւնո՛ նաեւ սուրբ հայրն եւագր գրէ, յի՛ստ դատաւոր քոյոյ որաիդ յառնել զստել եւ քննել: Զի թէ ճշմարտագիտ քննիցեմք, չունիմք պատասխանի Աստուծոյ. զի Տէրն մեր հրամայէ. Տեսեալ զգործս ձեր բարիս՝ փառաւորեցին զՀայրն. իսկ մեք ցուցաք զգործս դայթակելելիս եւ օրինակ չար յեւտակայից, ըստ Պողոսի՝ են մեղք որ գինի երթան ի դատաստան: Միթէ մեք անմա՞հեմք որ ոչ մտածեմք զհաշիւն գործ պահանջելոցդ ի մէջը, ըստ մարգարէին. Ո՛հ հոգիւք դատաւարտք, որք եղէք գայթակղութիւն զիտանցին: Զիջցուք, ս՛վ սիրելի, զիջցուք, զի կարասցուք տալ պատասխանի այնմ որ մինչ ի յետին բնիոնն պահանջէ: Եւ արդ ըստ խնդրոյ մարտիրոս վարդապետին եւ ըստ բաղձանաց ժողովրդեանն, անկեղծ կայծ բանի մարմնեղէն անապատի յայտնագլու ձրեցի: Իսկ եթէ ըստ մարդկային բարուց մտածիցեմք՝ պատճառելով զմիմեանս, մնայ սկզբնաշարին աշխարհակէզ հուրն անշիջելի ի մէջ ողբմելի եւ տառապեալ հայադուն դարմի, եւ լինի բազում չարեաց սոսիթ եւ անմեղ հագեաց կորուստ, ներկայիս եւ ապագայից գինի եկելոց, եւ մեք մնամք դատաւարտ եւ անպատասխանի առաջի անուշառ դատաւորին՝ գրադմացն պատիժ կրելով անձամբ: Ապա թէ զիջանիս ի հրամանս մեր եւ ի կոչ ժողովրդեանս՝ կատարելով զՔրիստոսի հրաման, ոչ սակաւ մնասակար իրաց հերքումն լինի եւ յիշով բարեաց սկիզբն եւ յիշատակ բարի գինի մեր եւ ուզիլ պողոտայ զհետ եկելոցն, եւ զի թէպէտ այժմ խնդայ հոգին չարութեան ընդ յառաջումն իւրն գործառնութեան, որով կայ արամեալ Հոգին սուրբ, զոր հրամայէ արբազանն ոչ տրամե-

ցուցանել, եւ ընդ լինել խաղաղութեան եւ հաշտութեան, յայնժամ մնայ զլիսակար եւ յամթալից լեալ արտահայտած ի քրիստոսականն սահմանէ՝ թշնամին արդարութեան, եւ առ այս ուրախացեալ ցնծայ Հոգին սուրբ: Աւստի եւ հաւատամ յԱստուած՝ զանց առնել մերովք գործեցելովք, պարգեւելով շնորհս առատս առ ի բժշկութիւն նմին վիրաց ըստ գրոյն. Ուրանոր լինելութիւն առաւելութեան մեղացն՝ անտանօր եւ յաճախեմն շնորհաց, այս այսպէս եւ վասն արեորիւ բայց է եւ այլինչ բազում խորհուրդ եւ բան, զոր ի սիրակերտ եւ ի ցանկալի տեսութեան ցուցցուք հաստատելով զպաշտան Քրիստոսի, որ է նոյնինքն խաղաղութիւն եւ սէր: Ըստ այնմ՝ թէ՛ Աստուած սէր է եւ որ կայ ի սէր նորա՝ մնայ յաւիտեանս յաւիտեանց: Ողջ լեր քոյովք ամենեքումք՝ ի խնամս Տեսնո՛ Յիսուսի յարագուարձ բերկրանօք: Գրեցաւ ի թվին ՌՃԺԶ (= 1967) յամենանն սեպտեմբերի իդ. ի մայրաքաղաքն Ստամբուլ ի դուռն Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն:

Այլ արդ ի վերայ այնց գրեցելոց գեւրազանցապէս ընտրելի եղեւ երկոքեանս այսոքիկ տեղի, այսինքն՝ կամ ի Կոստանդնուպօլիս եւ կամ ի Զմիւռնիս պատահիլ միմեանց առ այս գործ: Որոց պատճառ է վասն առաջնոյն ըստ հանդիսադրութեան տեղւոյն եւ ըստ հաստատութեան դաշնադրութեան, եւ վասն երկրորդին՝ ըստ նոյն զիտաւորութեան ստնի կիրոս, եւ յաւէտ առ ի բժշկութիւն որտից արանցն Արեւելից, Վերստին անգրէն հաստատեալ կացցեն ի նոյնութեան, որում ըզձան սիրտք մեր լինել այսպէս, եւ համայնից իսկ յամենայնի իսկ դու յօժարեալ ըստ իս ուղղեցես զմիտս քո առաւել ի տեղիս յայսոսիկ հաստատութեամբ: Եւ հաւատամ յԱստուած զի շահ եւ օգտութիւն լինի մեծ յոյժ:

Հրմարակեց՝ Մ. Ն. Ն.